

նոյն վարժարանի սաներէն Պ. Պ. Գալիամաճեան, Յակոբովի և զեւ մի քանի եռանդուն Հայ պատանիներ բողոքեր են պատութեան գէմ և իրենց ծնողաց հաւանութեամբը մատղիր են եղեր վարժարանը թողուու:

Տեսնե՞նք, Խօսէրթեան վարժարանի Հայ աշակերտաց ծնողքը Հայկաց, Գրիգորի և Վարդանաց Աստուածը պաշտած ժամանակնին՝ ոլիսի թողուն որ իրենց որդիքն ալ Պատղին կամ Միսիօնարին Աստուածը պաշտին:

Կ. ՔԵՐԵՍՏԵԱՆԱՆ

ԱՐ ՀԱՅԱԶԴԻ ԱՇԱԿԵՐՏՈ

Ա. ՕՊԻՒԹԵԱՆ ՎԵՐԺԱԲԱՆԻ.

Աղջիւ աշակերտներ

Լսեցի թէ մօտերս բողոքեր էք առ վարժարանի Տնօրէնն, այս կարգադրութեան գէմ, որով կը տրամադրէր զաշակերտս ուսնել անպատճառ բողոքական կրօնը Ալ գովեմ ձեր այդ ազգասիրական վարժութքը, նկատենով որ ատոնք կը յանդգնին աղատամութեան դիմակին տակ ամեն տեսակ պժգալիք գործել: Ալ ցաւէի ես արդէն ձեր վրայ Խօսէրթեան վարժարանի մէջ ուսանելնուք համար, կը ցաւէի զի փոխանակ աղատամուք յարկերու՝ կ'երթաք կուսանիք մոլիուանդներու յարկի մը տակ, որուն հիմնադրուելուն նպատակը միայն Բողոքականութիւնը տարածելէ:

Ասով չեմ ուզեր ըսել թէ ազգային յարկերու տակ և եթ զաստիարակուեցէք, զի անհնարին է օտար լեզուներ և բարձր գիտութիւններ կատարելապէս սովորել հոդ, այլ կ'ըսեմ թէ հարկ է փախիլ այն տեղերէն՝ ուր կրօնամզութեան ողբքալի ախտը կը տիրէ, և երթալ հոն ուր ազտամութիւնը ժողովրդիքան միծագոյն մասէն ընդդունուած ըլլարով կրօնական երկարուակութեան, քինամնզութեան ու մոլիուանդութեան մ'ակ գարմանն նկատուած է: Հոն աղատ և համարհակ ձեր խիղճն ու հաւատքը պաշտելով ջանացէք որ ըլլար կատարեալ լուսամիտ անձեր, և երբ օր մը ձեռն ի ճակատ դրած աշխարհիս մարդոց բարուցը վրայ մտածէք, ձեր սրտին խորէն հառաջ

արձակեցէք այն մոլեւանդներուն գէմ, որոնք ընդ միշտ եղայր եղայր գէմ կը պատականեն:

Բ. Ա. ԱՐԹՈՒՐՈՎ

28 Հ-Պ. 1875

Խ-Խ-Խ-Խ-Խ-

ՕՐԱԿԵՐ թ. 1052 սեպտ. 29.

ԿՈՒԷՐ.

Բարձր. Միտհաթ բաշա Հինդշարթի որ մեր Ազգային Հիւանդանոցը այցելութեան երթայով, ամեն յարկերն ալ շրջելով մի ըստ միոջէ աչքէ անցնելու յետոյ, 5 օսմ. ուկի նու էր մը շնորհելով մեկներ է:

ՕՐԱԿԵՐ թ. 1054 Հոկտեմ. 14,

ՅԱԳՈՒԼԵԱՑ.

ԽԱՅԱԳԻՐ-ՌԵԱՆ ԵՐԱՐԱՐ ԵՅԱԳԻՐ:

Ներկայ ամսոյս 25-ին ըստ սովորութեան կատարուեցաւ տեղոյս երկան ուսումնարանաց 6-ի երրորդ տարեգարձի հանդէսը խիստ շքեղ արարողութեամբ, զի նցն օրը (որ Ա. Քըիստափոր Խեկեցից տօնախմբութիւնը կատարուեցաւ) զիսի արձակման Ա. Պատարագին քահանացք և զարդը խաչով և խաչվառով Շարական երգելով զիմեցն զէսկ յօրիորդաց ուսումնարան, որանց եռեկից զնում էին և բազմամբուժ ժողովուրդ, արք և կանայք, նցն օրուայ մատաղից մասնակից լինելէն յետոյ, նցն հանդիսով մտան ուսումնարան, որ կարգաւ շորուած էին երկան աշակերտներ յաջ և յաշեակ իրանց ուսուցիչներով և ուսուցուհներով. նորա ևս երգեցին յարմարաւոր Շարական, և Անդաստան օրհնուեցաւ, և յետոյ ըսկանցին հետոցնետ կարգալ խորհրդաւոր ճառեր, և լրանալիս՝ երգում էին երկան մանուկներ որոտաշարժ երգեր. 1, ճառն կարգաց Համնազարեանց Պ. Սարդիսն (որ հօգարարձութեան անդամ է), 2, Տ. Ակոնգեանց Պ. Նիկոլայոսն